ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ 22-Ը ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Գնել Սանոսյան

   Վլադիմիր Արեստակյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող:

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2021թ. հոկտեմբերի 20-ից 22-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Լիտվայի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարար

   Մարիուս Սկուոդիս

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Միջազգային տրանսպորտային նորարարական համաժողովի շրջանակներում կայանալիք «Տրանսպորտ և լոգիստիկա 2050» խորագրով նախարարական նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   - ✓ Տրանսպորտ և լոգիստիկա 2050. եվրոպական քաղաքականություն
   - ✓ Տրանսպորտ և լոգիստիկա 2050. ոլորտի վերաձևավորումը համաճարակից հետո
   - ✓ Տրանսպորտը այսօր և վաղը. արտադրողների դերը
   - ✓ «Գլոբալ միտումներ, որոնք փոխում են լոգիստիկայի ապագան և մատակարարման շղթան»:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ելույթով հանդես են եկել Լիտվայի Հանրապետության նախագահ Գիտանաս Նաուսեդան, Լիտվայի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Մարիուս Սկուոդիսը, Տրանսպորտային նորարարական ասոցիացիայի խորհրդի նախագահ Յուրգիս Ադոմավիչյուսը, Եվրոպայի Հանձնաժողովի՝ բնապահպանական հարցերով անդամ Վիրջինիյուս Սինկևիչիուսը:

Տեղի է ունեցել նախարարական նիստ՝ «Կանաչ, թվային և մրցակցային տրանսպորտ. որքան հավակնոտ պետք է լինենք կարգավորումների նոր ոլորտներում» խորագրով, որին մասնակցել են Միացյալ Նահանգների, Ճապոնիայի, Արևելյան և Հյուսիսային գործընկերության երկրների տրանսպորտի և կապի նախարարներ:

Հանդիպում է կայացել Լիտվայի կապի և տրանսպորտի նախարար Մարիուս Սկուոդիսի հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Մարիուս Սկուոդիսի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են տարբեր հարցեր տրանսպորտային ոլորտում նորարարությունների և թվայնացման վերաբերյալ:

Անդրադարձ է կատարվել էլեկտրոմոբիլների շահագործման խթանմանն ուղղված լիտվական փորձին, ինչպես նաև Հայաստանի՝ որպես ԵԱՏՄ անդամ երկրի և Լիտվայի՝ որպես ԵՄ անդամ երկրի միջև փոխգործակցության ներուժի պատշաճ օգտագործմանը: Քննարկվել են անվտանգ տրանսպորտային համակարգ ունենալու, տրանսպորտի ոլորտում գործունեություն իրականացնողների մասնագիտական որակավորումը բարձրացնելու, ինչպես նաև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման ԵՄ չափորոշիչները տեղայնացնելու, ՀՀ օրենսդրությունը տրանսպորտի բնագավառում հնարավորինս ԵՄ օրենդրությանը ներդաշնակեցնելու վերաբերյալ հարցեր, երկու երկրներում երկաթուղային ոլորտի առանձնահատկությունները, գործող կառավարման համակարգը, առկա խնդիրները, բարեփոխումների անհրաժեշտությունները և հնարավորությունները:

Իմ խոսքում կարևորել եմ Լիտվայի կողմից իրականացվող ծրագիրը, որի շրջանակներում 2020-2021թթ ընթացքում տեղի են ունեցել ավտոմոբիլային, երկաթուղային և ավիացիոն մասնագետների փոխայցելություններ փորձի փոխանակման նպատակով: Արդյունքում հա

գործընկերները ծանոթացել են նշված ոլորտներում լիտվական և ԵՄ փորձին ու ստանդարտներին, ինչը կարևոր ձեռքբերում է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում ԵՄ-ի հետ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման գործընթացում:

Ներկայացվել է Հայաստանում այդ ուղղությամբ իրականացվող օրենսդրական փոփոխությունները:

Հանդիպման ընթացքում գոհունակությամբ արձանագրվեց, որ Wizz Air ավիաընկերությունը 2021 թվականի հոկտեմբերի 31-ից նախատեսում է շաբաթական երկու անգամ իրականացնել ուղիղ չվերթեր Վիլնուս–Երևան–Վիլնյուս ուղղությամբ, ինչը կխթանի երկկողմ առևտրաշրջանառությունը և զբոսաշրջությունը:

Քննարկվել են Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների սահմանված պահանջների ապահովման նպատակով անհրաժեշտ իրավական դաշտի ձևավորման վերաբերյալ հարցեր նույնպես:

Զրույցի վերջում Մարիուս Սկուոդիսին հրավիրել եմ Հայաստան՝ համագործակցության նոր ուղիները տեղում քննարկելու և հայաստանյան փորձին ծանոթանալու նպատակով:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

Առաջարկվել է շարունակել աշխատանքները տրանսպորտային նորարարությունների և թվայնացման ոլորտում:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ

26.10.2021թ.